<p>Contents</p> <p>1. Definitions and Assumptions</p> <p>1.1. Definitions and Assumptions for Ground Telephone</p> <p>1.2. Definitions and Assumptions for Air-Ground Radio</p> <p>2. Introduction</p> <p>3. Ground Telephone</p> <p>3.1. Facilities</p> <p>3.1.1. Access Methods</p> <p>3.1.1.1. Indirect Access</p> <p>3.1.2. Call Queuing Facility</p> <p>3.1.3. Call Priority</p> <p>3.1.3.1. Intrusion by a Priority Call</p> <p>3.1.4. Simultaneous Calls</p> <p>3.1.4.1. Overriding Principles</p> <p>3.1.4.2. Specific Situations</p> <p>3.1.5. Common Appearance/Ring Group</p> <p>3.1.6. Call Transfer</p> <p>3.1.7. Hold</p> <p>3.1.8. Conference</p> <p>3.1.9. Call Pick Up</p> <p>3.1.10. Call Diversion</p> <p>3.1.11. Audible Tones</p> <p>3.1.12. Phone Book</p> <p>3.1.13. Call Registry</p> <p>4. Air-Ground Radio</p> <p>4.1. Facilities</p>	<p>Բովանդակություն</p> <p>1. Սահմանումներ և տերմիններ</p> <p>1.1. Սահմանումներ և տերմիններ վերգետնյա հեռախոսային կապի համար</p> <p>1.2. Սահմանումներ և տերմիններ երկիր-երկինք ռադիոկապի համար</p> <p>2. Ներածություն</p> <p>3. Վերգետնյա հեռախոսային կապ</p> <p>3.1. Հնարավորություններ</p> <p>3.1.1. Մուտքի թույլտվության մեթոդներ</p> <p>3.1.1.1. Մուտքի անուղղակի թույլտվություն</p> <p>3.1.2. Կանչերը հերթավորելու հնարավորություն</p> <p>3.1.3. Կանչի առաջնահերթություն</p> <p>3.1.3.1. Միջամտություն առաջնահերթ կանչի կողմից</p> <p>3.1.4. Միաժամանակյա կանչեր</p> <p>3.1.4.1. Հիմնական սկզբունքներ</p> <p>3.1.4.2. Հատուկ իրավիճակներ</p> <p>3.1.5. Տրամաբանորեն միացված զանգերի խումբ</p> <p>3.1.6. Կանչի փոխանցում</p> <p>3.1.7. Սպասում</p> <p>3.1.8. Կոնֆերանս</p> <p>3.1.9. Կանչին պատասխանելը</p> <p>3.1.10. Կանչի վերահասցեավորում</p> <p>3.1.11. Լսելի տոներ (Audible Tones)</p> <p>3.1.12. Հեռախոսագիրք</p> <p>3.1.13. Կանչի գրանցում</p> <p>4. Երկիր-երկինք ռադիոկապ</p> <p>4.1. Հնարավորություններ</p>



<p>4.1.1. Radio Access</p> <p>4.1.1.1. Basic Description</p> <p>4.1.1.2. Modes of Operation</p> <p>4.1.1.3. Receiving - Frequency Active</p> <p>4.1.1.4. Audio Device Selection – Rx Mode</p> <p>4.1.1.5. Transmitting</p> <p>4.1.1.6. Frequency Cross-Coupling</p> <p>4.2. Short-Term Recording</p> <p>4.3. Offset Transmission</p> <p>4.4. Best Signal Selection (BSS)</p> <p>4.5. Main/Standby Radio Switchover</p> <p>4.6. Radio Sheering</p>	<p>4.1.1. Ռադիո մուտք</p> <p>4.1.1.1. Հիմնական նկարագրություն</p> <p>4.1.1.2. Աշխատանքի ռեժիմները</p> <p>4.1.1.3. Ընդունում - հաճախականությունը ակտիվ է</p> <p>4.1.1.4. Աուդիո սարքի ընտրություն- ընդունման ռեժիմ</p> <p>4.1.1.5. Հաղորդում</p> <p>4.1.1.6. Հաճախականության խաչաձև զուգորդում</p> <p>4.2. Կարճաժամկետ ձայնագրում</p> <p>4.3. Օֆսեթ հաղորդումներ</p> <p>4.4. Լավագույն ազդանշանի ընտրություն (BSS)</p> <p>4.5. Հիմնական/պահուստային ռադիո փոխանջատում</p> <p>4.6. Ռադիոընդլայնում</p>
<p>5. VCS Architecture</p> <p>5.1. Central Time Source</p> <p>5.2. Legal Recording Interface</p> <p>5.3. VCS Power</p> <p>5.4. CWP Equipments</p> <p>5.5. Interfaces</p> <p>5.5.1. Supported Interfaces</p> <p>5.5.2. Quantity of Interfaces</p>	<p>5. VCS-ի արխիտեկտուրան</p> <p>5.1. Ժամանակի կենտրոնացված աղբյուր</p> <p>5.2. Իրավական ձայնագրման ինտերֆեյս</p> <p>5.3. VCS-ի սնուցումը</p> <p>5.4. CWP Սարքավորումներ</p> <p>5.5. Ինտերֆեյսներ</p> <p>5.5.1. Անհրաժեշտ ինտերֆեյսներ</p> <p>5.5.2. Ինտերֆեյսների քանակը</p>
<p>6. Human –Machine Interface (HMI)</p> <p>6.1. Activation Device</p> <p>6.1.1. Touch-Sensitive Screens (Touch Panel)</p> <p>6.2. Audio Devices</p> <p>6.3. Audio Requirements</p> <p>6.4. Manual Dial Pad</p> <p>6.5. Split-Headset Working</p> <p>6.6. Telephone Handset Working</p> <p>6.7. Hand Microphones Working</p> <p>6.8. Ending a Telephone Connection</p> <p>6.9. Loudspeakers Working</p> <p>6.10. Human Engineering</p>	<p>6. Մարդ - մեքենա ինտերֆեյս (HMI)</p> <p>6.1. Ակտիվացման սարք</p> <p>6.1.1. Սենսորային էկրաններ (Սենսորային պանել)</p> <p>6.2. Աուդիո սարքեր</p> <p>6.3. Աուդիո պահանջներ</p> <p>6.4. Ձեռքով հավաքելու պանել</p> <p>6.5. Առանձնացված ականջակալի աշխատանքը</p> <p>6.6. Հեռախոսափողի աշխատանքը</p> <p>6.7. Ձեռքի խոսափողի աշխատանքը</p> <p>6.8. Հեռախոսային կապի ավարտ</p> <p>6.9. Բարձրախոսների աշխատանքը</p> <p>6.10. Էրգոնոմիկա</p>
<p>7. Engineering</p> <p>7.1. Availability, Reliability and Maintainability (ARM)</p> <p>7.1.1. Availability</p> <p>7.1.2. Reliability</p> <p>7.1.3. Maintainability</p> <p>7.1.3.1. Hardware</p> <p>7.1.3.2. Software</p>	<p>7. Կառուցվածքի նախագծում</p> <p>7.1. Մատչելիություն, հուսալիություն և սպասարկելիություն (ARM)</p> <p>7.1.1. Մատչելիություն</p> <p>7.1.2. Հուսալիություն</p> <p>7.1.3. Սպասարկելիություն</p> <p>7.1.3.1. Սարքավորումային ապահովում</p> <p>7.1.3.2. Ծրագրային ապահովում</p>

<p>7.2. General Response Criteria</p> <p>7.2.1. Call Processing Delay</p> <p>7.2.2. PTT Set-Up Delay</p> <p>7.2.3. A/C call (Squelch) Delay</p> <p>7.2.4. VoIP Audio Signal Transmission Delay</p> <p>7.2.5. Dial Tone Delay</p> <p>7.2.6. Software Response Delay</p> <p>7.2.6.1. Alarm Indications</p> <p>7.2.6.2. Configuration Changes</p> <p>7.2.7. System Response Times</p> <p>7.2.8. Software</p> <p>7.2.8.1. Touch Screen Facility</p> <p>7.3. System Management</p> <p>7.3.1. Performance Management</p> <p>7.3.2. Fault (or Maintenance) Management</p> <p>7.3.3. Configuration Management</p> <p>7.3.4. Accounting Management</p> <p>7.3.5. Security Management</p> <p>7.4. Accessibility</p> <p>7.5. Safety</p> <p>7.6. Electromagnetic Compatibility (EMC)</p> <p>7.7. Technical Supervisor Control Terminals</p>	<p>7.2. Պատասխանի կարևոր չափանիշներ</p> <p>7.2.1. Կանչի պրոցեսի ուշացում</p> <p>7.2.2. PTT-ի ուշացումը</p> <p>7.2.3. Ինքնաթիռի կանչի ուշացում</p> <p>7.2.4. VoIP աուդիոսիգնալի հաղորդման ուշացում</p> <p>7.2.5. Համար հավաքելու տոնի ուշացում</p> <p>7.2.6. Ծրագրային ապահովման պատասխանի ուշացում</p> <p>7.2.6.1. Տազնապի ինդիկացիա</p> <p>7.2.6.2. Կոնֆիգուրացիայի փոփոխություններ</p> <p>7.2.7. Համակարգի պատասխանի ժամանակը</p> <p>7.2.8. Ծրագրային ապահովում</p> <p>7.2.8.1. Սենսորային էկրանի հնարավորությունները</p> <p>7.3. Համակարգի կառավարում</p> <p>7.3.1. Աշխատանքի կառավարում</p> <p>7.3.2. Անսարքության (կամ տեխնիկական սպասարկման) կառավարում</p> <p>7.3.3. Կոնֆիգուրացիայի կառավարում</p> <p>7.3.4. Հաշվապահական կառավարում</p> <p>7.3.5. Անվտանգության Կառավարում</p> <p>7.4. Մուտքի հնարավորություն</p> <p>7.5. Անվտանգություն</p> <p>7.6. Էլեկտրամագնիսական համատեղելիություն (EMC)</p> <p>7.7. Տեխնիկական ղեկավարի կառավարման տերմինալներ</p>
<p>8. System Documentation</p> <p>8.1. Աշխատանքային փաստաթղթավորում</p> <p>8.1.1. General Requirements</p> <p>8.1.2. Operator Position User Manual</p> <p>8.1.3. System Management</p> <p>8.2. Technical Documentation</p> <p>8.2.1. General Requirements</p> <p>8.2.2. System Overview</p> <p>8.2.3. Hardware Documentation</p> <p>8.2.4. Software Documentation</p> <p>8.2.5. Installation Manuals</p>	<p>8. Համակարգի փաստաթղթավորում</p> <p>8.1. Աշխատանքային փաստաթղթավորում</p> <p>8.1.1. Ընդհանուր պահանջներ</p> <p>8.1.2. Օպերատորի աշխատատեղի օգտագործման ձեռնարկ</p> <p>8.1.3. Համակարգի կառավարում</p> <p>8.2. Տեխնիկական փաստաթղթավորում</p> <p>8.2.1. Ընդհանուր պահանջներ</p> <p>8.2.2. Համակարգի նկարագիրը</p> <p>8.2.3. Սարքավորումային փաստաթղթավորում</p> <p>8.2.4. Ծրագրային մասի փաստաթղթավորում</p> <p>8.2.5. Ձեռնարկներ տեղադրման համար</p>
<p>9. Training</p> <p>9.1. Operational Training</p> <p>9.1.1. Controller</p>	<p>9. Ուսուցում</p> <p>9.1. Աշխատանքային ուսուցում</p> <p>9.1.1. Օդային երթևեկության կառավարման</p>

9.2. Technical Training

10. References

11. Abbreviations

1. Definitions and Assumptions

1.1.1 "Shall" - indicates a statement of specification, the compliance with which is mandatory to achieve. It indicates a requirement that must be satisfied by the offered systems claiming conformity to the specification. Such requirements are intended to be testable and their implementation auditable.

1.2 Definitions and Assumptions for Ground Telephone

1.2.1 Busy:

Terminal busy - The condition that arises when an incoming call has reached the 'B'-party CWP but there is no resource available to present the call to the user. The Terminal busy condition shall not arise on a DA call or an IA call, but is possible for an IDA call in the event that the incoming call queue is full.

Network busy - The condition that arises when all speech paths between one VCS and another are either currently in use or (exceptionally) configured as out-of-service via the System Management Terminal.

1.2.2 Call parties - The terms 'A'-party, 'B'-party and 'C'-party identify the users involved in a telephone call, as follows:

'A'-party: the user who initiates a telephone call – the calling party;

'B'-party: the user who first receives the telephone call – the called party;

'C'-party: any other party involved in an established call.

կարգավար

9.2. Տեխնիկական ուսուցում

10. Հղումներ

11. Հասկացվումներ

1. Սահմանումներ և տերմիններ

1.1.1 "Պետք է" - Արտահայտում է այն առանձնահատկությունը, որի համապատասխանությանը հասնելը պարտադիր է: Այն արտահայտում է պահանջ, որը պետք է բավարարվի առաջարկվող համակարգի կողմից, պահանջելով համապատասխանություն բնութագրին: Այսպիսի պահանջները միտված են փորձարկման ենթակա լինելու, իսկ դրանց ներդրումն ու շագհործումը պետք է լինի վերստուգելի:

1.2 Սահմանումներ և տերմիններ վերգետնյա հեռախոսային կապի համար

1.2.1 Զբաղված է.

Տերմինալը զբաղված է - Դրություն, որն առաջանում է, երբ ներս մտնող կանչը հասել է CWP բաժանորդ "B"-ին, բայց չկա ոչ մի ազատ ռեսուրս կանչը շահագործողին ներկայացնելու համար: Տերմինալը զբաղված է դրությունը չպետք առաջանա DA կանչի կամ IA կանչերի դեպքում, բայց հնարավոր է IDA կանչի համար այն դեպքում, երբ մուտքային կանչերի հերթը լցված է:

Ցանցը զբաղված է - Դրություն, որն առաջանում է, երբ բոլոր խոսակցական ուղիները VCS-ների միջև ընթացիկորեն զբաղված են կամ (բացառապես) Համակարգի Կառավարման Տերմինալի կողմից կոնֆիգուրացված են որպես վնասված:

1.2.2 Կանչի բաժանորդներ - Տերմիններ՝ բաժանորդ "A", բաժանորդ "B", բաժանորդ "C", բացահայտում են հեռախոսային կանչի մեջ ընդգրկված օգտվողներին հետևյալ ձևով՝ բաժանորդ "A"՝ օգտվող, որը սկսում է հեռախոսային կանչը - կանչող կողմ, բաժանորդ "B"՝ օգտվող, որն առաջինն է ստանում հեռախոսային կանչը - կանչվող կողմ, բաժանորդ "C"՝ ցանկացած այլ կողմ, որն ընդգրկված է կանչի մեջ:

1.2.3 Dynamic display - A device used for the visual presentation of operational information such as caller identities, call status and programmable touch-keys.

1.2.4 Facility - The term 'facility' is used to describe the function to be carried out and the term 'Feature' gives further details or the particular attributes of the Facility.

1.2.5 Key - The term 'key' is used to refer to a single activation device such as a key, switch, button or an icon.

1.2.6 Normal/Abnormal - The terms 'normal' and 'abnormal' refer to when the Performance criteria defined for each Facility are either met or infringed respectively.

1.2.7 Port - A communication connection point to a VCS. Normally, a single simple analogue telephone extension will be associated with a single port although other interface types may require the association of more than one port to each interface.

1.2.8 Supervisory Tones - The various supervisory tones and announcements used (when applicable) by the VCS.

1.2.9 User - An Air Traffic Controller or other operational person carrying out the duties of Air Traffic Management.

1.3 Definitions and Assumptions for Air-Ground Radio

1.3.1 Dynamic display - A device used for the visual presentation of operational information such as radio frequencies

1.2.3 Դինամիկ էկրան - Սարք, որն օգտագործվում է ինֆորմացիայի վիզուալ ներկայացման համար, ինչպես օրինակ՝ կանչողի ինքնություն, կանչի ստատուս և ծրագրավորվող սենտրային բանալիներ (ստեղներ):

1.2.4 Հնարավորություն - “Հնարավորություն” տերմինը օգտագործվում է նկարագրելու համար այն ֆունկցիան, որը պետք է իրականացվի, և “Հատկանիշ” տերմինը տալիս է Հնարավորության ավելի մանրամասն տվյալներ կամ առանձնահատուկ հատկանիշներ:

1.2.5 Բանալի - “Բանալի” տերմինը ենթադրում է եզակի ակտիվացման սարք, ինչպես օրինակ բանալի, անջատիչ, կոճակ կամ նշան:

1.2.6 Նորմալ/ոչ նորմալ - “Նորմալ” և “ոչ նորմալ” տերմինները տեղեկացնում են, թե յուրաքանչյուր հնարավորության համար սահմանված աշխատանքային չափանիշները կամ բավարարված են կամ խափանված են համապատասխանորեն:

1.2.7 Պորտ - Կապի միացման կետ VCS-ին: Դիտվում է որպես եզակի պարզ անալոգային հեռախոսի ընդլայնում միացված եզակի պորտով, չնայած այլ ինտերֆեյսների տիպեր կարող են պահանջել մեկից ավելի պորտերի միացում յուրաքանչյուր ինտերֆեյսին:

1.2.8 Վերահսկող ազդանշաններ - Տարբեր վերահսկող ազդանշաններ և նախազգուշացնող տոներ, որոնք օգտագործվում են VCS-ի կողմից

1.2.9 Շահագործող - Օդային երթևեկության կարգավար կամ այլ աշխատանքային անձ, որը իրականացնում է օդային երթևեկության կառավարման պարտականություններ:

1.3 Սահմանումներ և տերմիններ երկիր-երկիր օդային համար

1.3.1 Դինամիկ էկրան - Սարք, որն օգտագործվում է աշխատանքային ինֆորմացիայի վիզուալ ներկայացման համար, ինչպես օրինակ ընտրված

<p>selected, frequencies in-use / aircraft calling.</p> <p>1.3.2 Key - The term 'key' is used to refer to a single activation device such as a key, switch, button or icon.</p> <p>1.3.3 User - An Air Traffic Controller or other operational person carrying out the duties of Air Traffic Management.</p> <p>1.3.4 Push-to-talk (PTT) - PTT is the User action of operating a key to transmit on one or more radio frequencies. The PTT key itself is invariably a mechanical device spring loaded to de-activate upon release but some operational applications require the use of a PTT lock-on mechanism.</p> <p>1.3.5 Aircraft (A/C) Call - A/C call is a visual indication presented to the User that a particular frequency is active due to the reception of a carrier frequency by one or more receivers. A/C call is often associated with 'Mute Lift' or 'Squelch'.</p> <p>1.3.6 Radio Frequency - The term Radio Frequency is used to refer to a nominal ATC – frequency such as 123 decimal 00 (25kHz spacing), 123 decimal 000 (8.33kHz spacing).</p> <p>1.3.7 Radio Channel - The term 'Radio Channel' is used to specify the nominal centre frequency in conjunction with a specific radio location when in fact the actual frequency used may be an off-set of the nominal sector frequency. Furthermore a radio channel always defines at least a logical transmission line, very often it specifies the VCS physical</p>	<p>ռադիոհաճախականություններ, օգտագործվող հաճախականություններ/ ինքնաթիռի կանչեր:</p> <p>1.3.2 Բանալի - “Բանալի” տերմինը ենթադրում է եզակի ակտիվացման սարք, ինչպես օրինակ բանալի, անջատիչ, կոճակ կամ նշան:</p> <p>1.3.3Շահագործող – Օդային երթևեկության կարգավար կամ այլ աշխատանքային անձ, որը իրականացնում է օդային երթևեկության կառավարման պարտականություններ:</p> <p>1.3.4 PTT սեղմակ - PTT-ն՝ ստեղն աշխատեցնելու շահագործողի գործողությունն է, հաղորդելու համար մեկ կամ մի քանի ռադիո հաճախականությունների վրա: PTT-ն զսպանակով աշխատող անփոփոխ մեխանիկական սարք է (նորմալ բաց կոնտակտ), որն ազատ արձակումից հետո կապակտիվացվի, բայց որոշ աշխատանքային ռեժիմներ պահանջում են նորմալ փակ կոնտակտով PTT:</p> <p>1.3.5 Ինքնաթիռի կանչ – Ինքնաթիռի կանչը տեսողական նշան է, որը ներկայացվում է շահագործողին, ցույց տալու որ մի որոշակի հաճախականություն ակտիվ է մեկ կամ ավելի ավիափոխադրողների հաղորդիչների կողմից: Ինքնաթիռի կանչը հաճախ ներկայացվում է “Mute Lift”-ով կամ “Squelch” -ով:</p> <p>1.3.6 Ռադիոհաճախականություն - Ռադիոհաճախականություն նշանակում է նոմինալ ATC հաճախականություն, ինչպես օրինակ 123,00 (25ԿՀց քայլով), 123,000 (8.33ԿՀց քայլով):</p> <p>1.3.7 Ռադիոկանալ - “Ռադիոկանալ” տերմինը օգտագործվում է մանրամասնելու համար կենտրոնի նոմինալ հաճախականությունը կապված որոշակի ռադիո տեղանքի հետ, երբ փաստացի օգտագործվող հաճախականությունը կարող է լինել սեկտորի նոմինալ հաճախականությունից դուրս: Դեռ ավելին ռադիոկանալը միշտ սահմանում է առնվազն տրամաբանական հաղորդիչ զիծ, շատ հաճախ</p>
---	---

<p>radio interface.</p> <p>1.3.8 Radio Coverage - The radio coverage is the airspace in which a frequency is usable. The use of more than one Tx/Rx equipment to control the extent of radio coverage is useful in some circumstances:</p> <p>a) Airspace size;</p> <p>b) Geographical considerations (mountains, sea..);</p> <p>c) Main and standby radio coverage.</p> <p>2. Introduction</p> <p>The purpose of the Voice Communication System based on digital technology is to meet and guarantee the requirements of Ground to Air and Ground to Ground communications necessary for the safe and efficient implementation of Air Traffic Control services environments.</p> <p>The Small (< 350 ports) Voice Communication System shall include:</p> <p>2.1 Telephone Communication (Ground/Ground Communication), mainly for voice communication between controllers within the same control centre or with subscribers in other units.</p> <p>2.2 Radio Communication (Air/Ground Communications) for voice communication between pilots and air traffic controllers.</p> <p>2.3 Controller Working Positions with intersystem Instantaneous Access between each other.</p> <p>2.4 The Management System.</p> <p>2.5 GPS synchronization of time.</p> <p>3. Ground Telephone</p> <p>The Ground Telephone component of a VCS permits telephone conversations to</p>	<p>այն դիտարկվում է որպես VCS-ի ֆիզիկական ռադիոհինտերֆեյս:</p> <p>1.3.8 Ռադիոծածկույթ - ռադիոծածկույթը այն օդային տարածքն է, որտեղ ռադիոհաճախականությունը օգտագործելի է: Մեկից ավելի Tx/Rx սարքավորումների օգտագործումը ռադիոծածկույթը կառավարելու համար օգտակար է որոշ հանգամանքներում:</p> <p>ա) Օդային տարածքի չափը,</p> <p>բ) Աշխարհագրական նկատառումներ,</p> <p>գ) Հիմնական և պահուստային ռադիո ծածկույթ:</p> <p>2. Ներածություն</p> <p>Թվային տեխնոլոգիայի վրա հիմնված Չայնային Կապի Համակարգի նպատակն է բավարարել և երաշխավորել երկիր-երկինք և երկիր-երկիր կապերի պահանջները, որոնք անհրաժեշտ են Օդային Երթևեկության Կառավարման ծառայությունների միջավայրերի անվտանգ և արդյունավետ իրականացման համար:</p> <p>Փոքր (< 350 պորտեր) Չայնային Կապի Համակարգը պետք է ընդգրկի.</p> <p>2.1 Հեռախոսային կապ (երկիր-երկիր կապ) - հիմնականում ձայնային կապի համար միևնույն կառավարման կենտրոնի կարգավարների միջև կամ այլ միավորների բաժանորդների հետ:</p> <p>2.2 Ռադիոկապ (երկիր-երկինք կապ) - օդաչուների և օդային երթևեկության կարգավարների միջև ձայնային կապի համար:</p> <p>2.3 Կարգավարական աշխատատեղեր միջհամակարգային ակնթարթային կապի հնարավորությամբ միմյանց միջև:</p> <p>2.4 Կառավարման Համակարգ:</p> <p>2.5 Ժամանակի սինխրոնացում GPS:</p> <p>3. Վերգետնյա հեռախոսային կապ</p> <p>VCS-ի վերգետնյա հեռախոսային կապի բաղադրիչը թույլ է տալիս հեռախոսային</p>
---	---

take place between Users connected to the same VCS or to other external Users. As most of these tasks must be handled within a short time, a short reaction time is an important issue. Setting up and handling of communication links shall be as simple and fast as possible.

3.1. Facilities

3.1.1. Access Methods

3.1.1.1 The access methods stated below shall be available for VCS:

- a) Direct Access;
- b) Instantaneous Access;
- c) Indirect Access.

3.1.1.2 Performance Criteria of Direct Access shall be available for VCS:

- a) Direct Access is designed to meet the requirements for Direct Controller-Controller Voice Communication (DCCVC) which stipulates that communication be established between controllers within 2 seconds in 99% of the time;
- b) The interval of 2 seconds is the delay between the 'A'-party initiating the call and the 'B'-party receiving the call alert/indication.

3.1.1.3. Performance Criteria of Instantaneous Access shall be available for VCS:

- a) Instantaneous Access is designed to meet the requirements of Instantaneous Controller-Controller Voice Communication (ICCV) which stipulates that two-way direct communication be established between non-physically adjacent controllers within 1 second or less in 99% of the time;
- b) The interval of 1 second is the delay between the 'A'-party initiating the call and the 'A'-party to 'B'-party speech path being established.

խոսակցություններ շահագործողների միջև՝ միացված նույն VCS-ին կամ այլ արտաքին շահագործողներին: Քանի որ այս առաջադրանքներից շատերը պետք է սպասարկվեն կարճ ժամանակում, կարճ պատասխանի ժամանակը կարևոր հարց է: Կապերի հաստատումը և սպասարկումը պետք է լինի հնարավորին չափ պարզ և արագ:

3.1. Հնարավորություններ

3.1.1. Մուտքի թույլտվության մեթոդներ

3.1.1.1 VCS-ի համար ներքոհիշյալ մուտքի հնարավորությունները պետք է լինեն.

- ա) Մուտքի ուղիղ թույլտվություն,
- բ) Մուտքի վայրկենական թույլտվություն,
- գ) Մուտքի անուղղակի թույլտվություն:

3.1.1.2 VCS-ի համար մուտքի ուղիղ թույլտվության աշխատանքային չափանիշները պետք է լինեն.

- ա) Մուտքի ուղիղ թույլտվությունը նախատեսված է բավարարելու կարգավար-կարգավար ուղիղ ձայնային կապի (DCCVC) պահանջները, որը նախատեսում է, որ կապը կարգավարների միջև լինի հաստատված 2 վայրկյանի ընթացքում ժամանակի 99%-ում,
- բ) Երկու վայրկյանը ժամանակի այն ինտերվալն է, որն անհրաժեշտ է, կանչը նախաձեռնող "A" բաժանորդի և "B" բաժանորդի միջև կանչը/ինդիկացիան ստանալու համար:

3.1.1.3. VCS-ի համար մուտքի վայրկենական թույլտվության աշխատանքային չափանիշները պետք է լինեն.

- գ) Մուտքի վայրկենական հնարավորությունը նախատեսված է բավարարելու կարգավար-կարգավար վայրկենական ձայնային կապի (ICCV) պահանջները, որը նախատեսում է, որ երկկողմանի ուղիղ կապ լինի հաստատված ֆիզիկապես ոչ իրար մոտ գտնվող կարգավարների միջև 1 վայրկյանի ընթացքում կամ ավելի քիչ, ժամանակի 99%-ում,
- դ) Մեկ վայրկյանը ժամանակի այն ինտերվալն է, որն անհրաժեշտ է կապը նախաձեռնող "A" բաժանորդի և "B" բաժանորդի միջև կապուղու հաստատման համար:



3.1.1.4. Indirect Access

The Indirect Access facility is equivalent to normal dialed telephone operation. In addition to dialing the 'B'-party address in full, the following PBX-type Facilities shall be also used to establish Indirect Access calls:

- a) Abbreviated Dialing - entering a short code (up to four digits, a character string of unrestricted length or a specific labelled key) on a telephone dialing keypad (or equivalent device), shall cause a call attempt to be made from the 'A'-party to a predefined 'B'-party associated with the supplied code;
- b) Last Number Redial - the operation of a key, shall cause a call attempt to be made from the 'A'-party to the 'B'-party to which the most recent previous call attempt (successful or unsuccessful) was made.
- c) It shall be possible for calls from more than one 'A'-party to be presented to a 'B'-party simultaneously.
- d) It shall be possible for either the 'B'-party or the 'A'-party to terminate an established Indirect Access call.

3.1.2. Call Queuing Facility

3.1.2.1. A telephone queue with at least 5-6 incoming or outgoing calls - displayed by a telephone stack on the touch screen - shall be available.

3.1.2.2. The operator position shall provide a similar handling of incoming and outgoing calls.

3.1.2.3. A call indication shall automatically appear on the next free telephone stack field when a new incoming call appears or a new outgoing call is started.

3.1.1.4. Մուտքի անուղղակի թույլտվություն

Մուտքի անուղղակի թույլտվության հնարավորությունը հավասարազոր է նորմալ ֆիքսված հեռախոսային կապի աշխատանքին: Ի լրացումն «B» բաժանորդի հասցեի ամբողջապես հավաքմանը, հետևյալ PBX-տիպի հնարավորությունները նույնպես պետք է օգտագործվեն մուտքի անուղղակի թույլտվության կանչեր հաստատելու համար.

- ա) Կարճ համարի հավաքում - կարճ կոդ մուտք անելը (մինչև չորս թիվ, անսահմանափակ նիշերի շարք կամ հատուկ անուններով բանալի) հեռախոսի ստեղնաշարի վրա (կամ նմանատիպ սարք), պետք է հիմք հանդիսանա կանչի համար, որը պետք է արվի «A» բաժանորդի կողմից նախապես որոշված «B» բաժանորդին, որը միացված է տվյալ կոդով,
- բ) Վերջին համարի վերահավաքում - բանալիի աշխատանքը պետք է հիմք հանդիսանա կանչի համար, որը պետք է արվի «A» բաժանորդի կողմից «B» բաժանորդին, որին արվել է (հաջողված կամ անհաջող) ամենավերջին նախորդ կանչը:
- գ) Պետք է մեկից ավելի «A» բաժանորդների կողմից կանչերի հնարավորություն լինի «B» բաժանորդին միաժամանակ:
- դ) Պետք է հնարավոր լինի դադարեցնելու հաստատված մուտքի անուղղակի հնարավորությամբ կանչը թե «A» բաժանորդի, թե «B» բաժանորդի համար:

3.1.2. Կանչերը հերթավորելու հնարավորություն

3.1.2.1. Պետք է հնարավոր լինի սենսորային էկրանի վրա հեռախոսային ստեկի ներսում ներկայացնելու առնվազն 5-6 մուտքային կամ ելքային հեռախոսային կանչերի հերթ:

3.1.2.2. Օպերատորի աշխատատեղը պետք է ապահովի մուտքային և ելքային կանչերի նմանատիպ սպասարկում:

3.1.2.3. Կանչի ինդիկացիան պետք է ինքնաբերաբար հայտնվի հեռախոսային ստեկի հաջորդ դաշտում, երբ մի նոր մուտքային կանչ է հայտնվում կամ մի նոր ելքային կանչ է սկսվում:

3.1.2.4. Հերթի կանգնած կանչը պետք է մնա

<p>3.1.2.4. A queued call shall stay on a telephone stack field until the call is ended. No rearrangement of calls in the displayed stack shall take place with new calls or call status changes.</p> <p>3.1.2.5. The stack field shall clearly indicate the communication state.</p> <p>3.1.2.6. The stack field shall clearly indicate the priority (normal / urgent).</p> <p>3.1.2.7. The stack field shall indicate the identification of the connected party.</p> <p>3.1.2.8. The basic attributes of the Call Queuing facility are as follows:</p> <p>a) All calls in the queue shall be in a calling (ringing) condition until answered;</p> <p>b) A manual process shall be used for selecting the next call to be answered but this does not preclude some form of first-in-first-out automatic selection</p> <p>c) Additional indications shall be used to identify Priority Calls that have arrived in the queue. Such indications shall include a unique flag against the queue entry, a different display attribute (e.g. flashing characters or a unique color) and a distinctive audible alert.</p>	<p>հեռախոսային ստեկի դաշտում մինչև կանչը ավարտվի: Կանչերի ոչ մի վերադասավորում չպետք է տեղի ունենա կապված ցուցադրված շարանի մեջ նոր կանչերի կամ կանչի ստատուսի փոփոխությունների հետ:</p> <p>3.1.2.5. ցանկի դաշտը պետք է պարզորեն ցույց տա կապի վիճակը:</p> <p>3.1.2.6. ցանկի դաշտը պետք է պարզորեն ցույց տա առաջնահերթությունը (նորմալ/շտապ):</p> <p>3.1.2.7. ցանկի դաշտը պետք է ցույց տա միացված բաժանորդի ինքնությունը:</p> <p>3.1.2.8. Կանչերը հերթավորելու հնարավորության հիմնական հատկանիշներն են.</p> <p>ա) Հերթի մեջ գտնվող բոլոր կանչերը պետք է լինեն կանչելու (զանգելու) վիճակում մինչև պատասխանվելը,</p> <p>բ) Հաջորդ կանչին պատասխանելու համար պետք է կիրառվի մեխանիկական գործընթաց, բայց չի բացառում ավտոմատ ընտրության առաջնահերթությունը,</p> <p>գ) Առաջնահերթության կանչերը, որոնք հերթի մեջ են, ճանաչելու համար պետք է օգտագործել լրացուցիչ ինդիկացիա: Նման ինդիկացիաները պետք է ընդգրկել եզակի նշանով հերթի մուտքի համար, որպես մեկ ուրիշ պատկեր (օրինակ՝ լուսավառվող նիշեր կամ եզակի գույն) և տարբերակիչ լսելի ազդանշան:</p>
<p>3.1.3. Call Priority</p> <p>3.1.3.1.1. The Priority facility shall attach an indicator (or flag) to a telephone call to show that it is "urgent" or "routine".</p> <p>3.1.3.1.2. This facility shall enable interruption of less urgent calls in progress at the time, if it is necessary to make an urgent call concerning the safety of aircraft (i.e., an emergency situation).</p> <p>3.1.3.1.3. The Priority Call shall be made:</p> <p>a) Manually before the call is made - before making the call, operation of a priority key shall set the call to "Priority". This method is used when the call is already known to</p>	<p>3.1.3. Կանչի առաջնահերթություն</p> <p>3.1.3.1.1. Առաջնահերթության հնարավորությունը պետք է կցվի մի նշանի (կամ դրոշ) հեռախոսի կանչը ցույց տալու համար, որ այն “շտապ է” կամ “սովորական”:</p> <p>3.1.3.1.2. Այս միջոցը պետք է հնարավոր դարձնի ավելի պակաս շտապ կանչերի դադարեցումը այն ժամանակ, երբ անհրաժեշտ է կատարել շտապ կանչ, ինքնաբերի անվտանգության հետ կապված (օրինակ՝ վթարային իրավիճակ):</p> <p>3.1.3.1.3. Առաջնահերթ կանչը պետք է իրականացվի.</p> <p>ա) Ձեռքով կատարվող - կանչն իրականացնելուց առաջ, առաջնահերթության բանալին պետք է հաստատվի “Առաջնահերթության” վիճակի վրա:</p>

<p>be urgent;</p> <p>b) During call set up - this method shall be used as a reaction to an urgent operational situation that has arisen, including a delay in answering at the far end or on receipt of busy tone.</p> <p>3.1.3.1.4. The 'B'-party shall react to an incoming priority call in the following manner:</p> <p>a) Provide some means of indicating that a priority call has been received (e.g. special visual and/or audible indications);</p> <p>b) Allow the priority call to intrude in a call already established.</p> <p>3.1.3.1.5. If a priority call cannot proceed due to congestion (all available circuits, links or channels being busy), the priority call shall interrupt an established unprotected routine call (shall one exist), thus allowing the priority call to proceed. Before the established routine call is interrupted, all parties engaged in that call shall receive an interrupt warning tone.</p> <p>3.1.3.2. Intrusion by a Priority Call</p> <p>a) In the event that the 'A'-party has made a Priority Call but encounters the 'B'-party busy, Intrusion shall take place automatically.</p> <p>b) Upon Intrusion all Parties shall be connected together in conference.</p> <p>c) Before the Intrusion occurs a warning tone shall be given.</p> <p>3.1.4. Simultaneous Calls</p> <p>A Simultaneous Call (SC) occurs when two Users call each other at exactly (or very nearly exactly) the same time. Simultaneous calls may arise as a result of any type of call (IA, DA and IDA) but the</p>	<p>Այս մեթոդը օգտագործվում է երբ կանչը արդեն հայտնի է, որպես շտապ,</p> <p>բ) Կանչի ընթացքում հաստատում – այս մեթոդը պետք է օգտագործել որպես պատասխան առաջացած շտապ աշխատանքային իրավիճակին, ներառյալ հեռավոր կանչին պատասխանելու ուշացում կամ զբաղվածության նշան ստանալիս:</p> <p>3.1.3.1.4. “B” բաժանորդի պատասխանը առաջնահերթ մուտքային կանչին պետք է կազմակերպել հետևյալ կերպ.</p> <p>ա) Ապահովել որոշ ցուցադրող միջոցներ, որ առաջնահերթ կանչը ստացվել է (օրինակ՝ հատուկ տեսողական և/կամ լսելի նշաններ),</p> <p>բ) Թույլատրել որ առաջնահերթ կանչը միջամտի արդեն հաստատված կանչին:</p> <p>3.1.3.1.5. Եթե առաջնահերթ կանչը չի կարող շարունակվել ծանրաբեռնվածության պատճառով (բոլոր առկա շղթաները, կապերը կամ կանալները զբաղված են), առաջնահերթ կանչը պետք է, որ դադարեցնի հաստատված անպաշտպան սովորական կանչը (եթե այդպիսինը կա), այդ ձևով թույլատրելով, որ առաջնահերթ կանչը շարունակվի: Նախքան հաստատված սովորական կանչի դադարեցումը, այդ կանչի մեջ ընդգրկված բաժանորդները պետք է ստանան դադարեցման նախազգուշացնող նշան</p> <p>3.1.3.2. Միջամտություն առաջնահերթ կանչով</p> <p>ա) Այն դեպքում, երբ “A” բաժանորդը կատարել է առաջնահերթ կանչ, բայց հանդիպել է “B” բաժանորդի զբաղվածությանը, միջամտությունը պետք է տեղի ունենա ինքնաբերաբար:</p> <p>բ) Միջամտության ժամանակ բոլոր կողմերը պետք է միանան իրար համաժողովում:</p> <p>գ) Նախքան միջամտությունը կողմերին պետք է տրվի նախազգուշացնող նշան:</p> <p>3.1.4. Միաժամանակյա կանչեր</p> <p>Միաժամանակյա կանչ է (SC) տեղի ունենում, երբ երկու շահագործողներ զանգում են իրար ժամանակի ճիշտ նույն պահին: Միաժամանակյա կանչերը կարող են առաջանալ ցանկացած տիպի կանչի արդյունքում (IA, DA և IDA), բայց ելքը</p>
---	--

<p>outcome will vary depending upon the specific situation prevailing at the time.</p> <p>3.1.4.1. Overriding Principles In all cases of simultaneous calls the following overriding principles shall apply:</p> <p>a) Indeterminate call states and/or VCS conditions shall not arise;</p> <p>b) Users shall not receive false, ambiguous or misleading indications;</p> <p>c) Notwithstanding the specific situations the guaranteed outcome for both Users shall be a “User Busy” indication.</p> <p>3.1.4.2. Specific Situations</p> <p>a) Both Users connected to the same VCS - In this situation, within the performance criteria stipulated for Direct Access and Instantaneous Access, a simultaneous call attempt shall result in both Users being connected.</p> <p>b) Each User Connected to a Separate VCS - In this situation, within the performance criteria stipulated for Direct Access and Instantaneous Access, a simultaneous call attempt shall result in one of the following outcomes:</p> <p>ba) Busy tone presented to the Users;</p> <p>bb) An automatic re-dial by each VCS after an interval of random length not exceeding 3s. If this attempt is also unsuccessful, the re-dial sequence shall be repeated. If, after the second attempt, the re-dial sequence is unsuccessful, Busy tone shall be presented to the User and the re-dial sequence stopped.</p> <p>3.1.5. Common Appearance/Ring Group</p> <p>3.1.5.1. The VCS shall support The</p>	<p>կտարբերվի՝ կախված տվյալ պահին գերակշռող հատուկ իրավիճակից:</p> <p>3.1.4.1. Հիմնական սկզբունքներ Միաժամանակյա կանչերի բոլոր դեպքերում պետք է կիրառվեն հետևյալ հիմնական սկզբունքները.</p> <p>ա) VCS-ում չպետք է առաջանան անորոշ կանչի իրավիճակներ,</p> <p>բ) Շահագործողները չպետք է ստանան սխալ, անորոշ կամ թյուրիմացության մեջ գցող նշաններ,</p> <p>գ) Չնայած հատուկ իրավիճակներին, երկու շահագործողների համար էլ երաշխավորված էլքը պետք է լինի “Շահագործողը զբաղված է” նշանը:</p> <p>3.1.4.2. Հատուկ իրավիճակներ</p> <p>ա) Նույն VCS-ին միացված երկու շահագործողներ - Այս իրավիճակում աշխատանքային չափանիշների շրջանակում, նախատեսված ուղղակի և վայրկենական մուտքի կապերի համար, միաժամանակյա կանչի փորձը պետք է հանգեցնի երկու շահագործողների կապի հաստատմանը.</p> <p>բ) Առանձին VCS-ների հետ կապված շահագործողներ - Այս իրավիճակում, աշխատանքային չափանիշների շրջանակում, նախատեսված ուղղակի և վայրկենական մուտքի կապերի համար, միաժամանակ կանչի փորձը, պետք է հանգեցնի հետևյալ ելքերից որևիցե մեկին.</p> <p>բա) Օգտվողներին ներկայացված զբաղվածության տոն,</p> <p>բբ) Ավտոմատ վերահավաքում յուրաքանչյուր VCS-ի կողմից պատահական ընդմիջումից հետո, որը չի գերազանցում 3 վայրկյանը: Եթե այս փորձն էլ է անհաջող լինում, վերահավաքման հաջորդականությունը պետք է կրկնվի: Եթե երկրորդ փորձից հետո, վերահավաքումը անհաջող է լինում, օգտվողին պետք է ներկայացվի զբաղվածության տոն և վերահավաքման փորձը պետք է դադարեցվի:</p> <p>3.1.5. Տրամաբանորեն միացված զանգերի խումբ</p> <p>3.1.5.1. VCS-ը պետք է ապահովի տրամաբանորեն միացված զանգերի խումբ ծառայությունը, որը թույլ</p>
--	--

<p>Common Appearance service allows a number of users to be logically grouped for the purpose of receiving calls.</p> <p>3.1.5.2.Calls to a Common Appearance Group shall be presented to all members simultaneously for anyone to answer.</p> <p>3.1.6. Call Transfer The VCS shall support The Call Transfer service enables a user involved in an active call to establish a new call between the other user in the active call and a third party.</p> <p>3.1.7. Hold The VCS shall support the Hold service allows a user to disconnect temporarily from an established call in order to carry out other telephony functions before returning to the original established call.</p> <p>3.1.8. Conference 3.1.8.1.The VCS shall support the Conference service enables a user to interconnect a number of Controller working positions and/or external lines of varying types, allowing full speech facilities to all connected parties.</p> <p>3.1.8.2. It shall be possible to build a conference with internal users and calls external to the VCS.</p> <p>3.1.8.3.There shall be no limitation in the number of conferences in the system.</p> <p>3.1.8.4.Any conference participant shall be able to leave the conference at any time by terminating the call.</p> <p>3.1.8.5.The conference shall belong to the initiator. If he leaves the conference,</p>	<p>է տալիս մի շարք շահագործողների կանչերը տրամաբանորեն խմբավորել ընդունելու նպատակով:</p> <p>3.1.5.2.Կանչերը որոշակի խմբի բոլոր անդամներին պետք է ներկայացվեն միաժամանակ, որևէ մեկի կողմից պատասխանելու համար:</p> <p>3.1.6. Կանչի փոխանցում VCS-ը պետք է ապահովի կանչի փոխանցման ծառայություն, որը հնարավոր է դարձնում, որ ակտիվ կանչի մեջ գտնվող շահագործողը, մի նոր կանչ հաստատի մեկ այլ շահագործողի հետ, որը գտնվում է ակտիվ կանչի մեջ, և երրորդ կողմի միջև:</p> <p>3.1.7. Սպասում VCS-ը պետք է ապահովի սպասելու ծառայություն, որը թույլ է տալիս շահագործողին անջատվել ժամանակավորապես հաստատված կապից, որպեսզի իրականացնի այլ հեռախոսային ֆունկցիաներ նախքան նախապես հաստատված կապին վերադառնալը:</p> <p>3.1.8. Կոնֆերանս 3.1.8.1.VCS-ը պետք է ապահովի կոնֆերանսի ծառայություն, որը թույլ է տալիս շահագործողին կապել մի շարք կարգավարական աշխատանքային տեղեր և/կամ տարբեր տեսակի արտաքին գծեր՝ թույլատրելով լիարժեք խոսելու հնարավորություններ բոլոր միացված կողմերին:</p> <p>3.1.8.2. Պետք է հնարավոր լինի ստեղծել կոնֆերանս VCS-ի ներքին օգտվողների և արտաքին կանչերի միջև:</p> <p>3.1.8.3.Համակարգի ներսում, կոնֆերանսների քանակության հարցում սահմանափակումներ չպետք է լինեն:</p> <p>3.1.8.4.Ցանկացած կոնֆերանսի մասնակից պետք է ի վիճակի լինի դուրս գալու կոնֆերանսից ցանկացած ժամանակ դադարեցնելով կանչը:</p> <p>3.1.8.5.Կոնֆերանսը պետք է պատկանի նախաձեռնողին: Եթե նա լքում է կոնֆերանսը, կոնֆերանսը պետք է դադարեցվի:</p>
---	---

conference shall be terminated.

3.1.8.6. Each participant of a conference shall be able to see in a list of participants the current connection states.

3.1.9. Call Pick Up

The VCS shall support The Call Pick Up service enables a user to answer a call that is in the alerting phase (ringing) at another user's terminal.

3.1.10. Call diversion

ATC have to assure operational procedures to provide communication access to any controller's entity at any time. If a controller wants to leave his position for a short period, or sectors are merged when traffic is reduced, the leaving controller shall be able to divert all his incoming calls to another operator position.

3.1.10.1. When invoked by a controller, this function shall automatically redirect incoming calls at that operator position to another operator position selected.

3.1.10.2. There shall be a Call Diversion key available.

3.1.10.3. It shall be possible to divert several operator positions in a chain.

3.1.10.4. Outgoing calls from a diverted operator position shall still be possible.

3.1.10.5. The identity of the operator position where the calls are diverted to shall be displayed in a display field while the diversion is active.

3.1.10.6. To cancel the call diversion, touch the Call Diversion key again. The visual indication of the diversion shall be extinguished. Incoming calls shall now be presented at the own position again.

3.1.11. Audible Tones

3.1.8.6. Յուրաքանչյուր կոնֆերանսի մասնակից պետք է ի վիճակի լինի տեսնելու մասնակիցների ցանկում ընթացիկ կապի իրավիճակները:

3.1.9. Կանչին պատասխանելը

VCS-ը պետք է ապահովի կանչին պատասխանելու ծառայություն, որը հնարավորություն է տալիս շահագործողին պատասխանելու կանչին, որը գտնվում է մեկ ուրիշ օգտվողի տերմինալի ազդանշանային փուլում:

3.1.10. Կանչի վերահասցեավորում

Օդային երթևեկության կառավարումը պետք է երաշխավորի կապի մուտքերի ապահովում ցանկացած կարգավարական միավորում ցանկացած ժամանակ: Եթե կարգավարը ցանկանում է կարճատև թողնել իր աշխատանքային տեղը, նա պետք է կարողանա վերահասցեավորել իրեն ուղղված բոլոր կանչերը դեպի ցանկացած մեկ այլ աշխատատեղ:

3.1.10.1. Երբ կանչում է որևէ կարգավար, այս ֆունկցիան պետք է մեխանիկորեն վերաուղղի ներս մտնող կանչերը այդ օպերատորից մյուս ընտրված օպերատորին:

3.1.10.2. Պետք է լինի կանչի վերահասցեավորման բանալի:

3.1.10.3. Պետք է հնարավոր լինի վերահասցեավորելու մի քանի օպերատորի տեղեր շղթայի մեջ:

3.1.10.4. Պետք է հնարավոր լինի ելքային կանչերի կազմակերպում վերահասցեավորված օպերատորի տեղից:

3.1.10.5. Վերահասցեավորված տեղում քանի դեռ վերահասցեավորումը ակտիվ է, դիսպլեյի վերահասցեավորման դաշտում պետք է երևա վերահասցեավորման իդենտիֆիկացիան:

3.1.10.6. Կանչի վերահասցեավորումը չեղյալ դարձնելու համար, պետք է կրկին աշխատեցնել կանչի վերահասցեավորման կոճակը: Վերահասցեավորման տեսողական նշանը պետք է անջատվի: Մուտքային կանչերը այժմ պետք է կրկին ուղղվեն դեպի իրենց նախկին տեղերը:

3.1.11. Լսելի տոներ

VCS-ը պետք է կարողանա ապահովել կանչող

A VCS shall be capable of providing call parties with audible tones, as recommended in Table below, to indicate call progress.

Table: System tones

Tone	Purpose	Freq. (Hz)	Period
Dial	Returned to a user when that user indicates to the system readiness to dial (for example, taking the telephone set off-hook).	425	Continuous
Ringing	Returned to the 'A'-party after successful call establishment and prior to call acceptance.	425	(1s on, 4s off), repeated
Terminal busy	Returned to the 'A'-party if all available voice paths to a user are occupied.	425	(0.5s on, 0.5s off), repeated
Congestion (Note 1)	Returned to the 'A'-party if a call cannot be completed to the required 'B'-party due to all appropriate inter-VCS links being occupied or otherwise unavailable.	425	(0.5s on, 0.5s off), repeated
Number Unobtainable (Note 2)	Returned to the 'A'-party if a terminal is "Out of Service" or the 'B'-party address is unassigned.	1000	(0.5s on, 0.5s off), repeated
Interrupt warning (Note 2)	Injected into the voice path to warn a party of the imminent priority interruption of an established call.	1000	(40ms on, 0.5s off) repeated for up to 15s

կողմերին լսելի տոներով, ինչպես խորհուրդ է տրված ներքոհիշյալ աղյուսակում՝ ցույց տալու համար կանչի զարգացումը.

Աղյուսակ. համակարգի լսելի տոներ

Տոնայ- նություն	նպատակ	հաճ. (հց)	Պարբեր- ություն
Հավաքել	Վերադարձված օգտվողին, երբ այդ օգտվողը ցույց է տալիս, որ համակարգը պատրաստ է հավաքել (օրինակ՝ հեռախոսի անջատիչը):	425	Ան- ընդհատ
Կանչ	Վերադարձ դեպի 'A'- օգտվողը, հաջողությամբ զանգահարելուց հետո և զանգը ընդունելուց առաջ:	425	(1s on, 4s off), կրկնվող
Տերմի- նալը զբաղված է	Վերադարձ դեպի «A», օգտվողը, եթե օգտագործողի բոլոր ձայնային ուղիները զբաղված են:	425	(0.5s on, 0.5s off), կրկնվող
զերբեռնվածություն (Օանոթագրություն 1)	Վերադարձ է «A» -ին, եթե զանգը չի կարող ավարտվել անհրաժեշտ B'- օգտվողի հետ, քանի որ բոլոր համապատասխան VCS- ի կապերը զբաղված են կամ անհասանելի:	425	(0.5s on, 0.5s off), կրկնվող
Համարը անհասանելի է (Օանոթագրություն 2)	Վերադարձ է «A» -ին, եթե տերմինալը «Անջատված» կամ «B'- ի հասցեն անորոշ է:	1000	(0.5s on, 0.5s off), կրկնվող
Ընդհատում Նախագրուշացում (Օանոթագրություն 2)	Մուտք դեպի ձայնային կապուղի, նախագրուշացնելու համար սահմանված զանգի անմիջական առաջնահերթության մասին:	1000	(40ms on, 0.5s off) կրկնվում է 15 վրկ մինչև հարկադրաբար անջա-

			prior to forced disconnection			տումր
Intrusion warning (Note 2)	Injected into the voice path to warn a party of the imminent priority conferencing of an established call	1000	1s on	Ընդհատում նախագրու շացում (Օանոթագրություն 2)	Մուտք դեպի է ձայնային կապուղի, նախագրու շացնելու համար սահմանված զանգի անմիջական առաջնահերթ համաժողովը	1000 1s on
<p>Note 1: The recommendation for congestion tone is the same as that for busy tone. If users wish to distinguish between the two tones, a dual frequency tone, e.g. 425Hz/ 1000Hz (0.5s each; repeated) can be used.</p> <p>Note 2: Not specified in ITU-T Recommendation Q.35/E.180: "Technical characteristics of tones for the telephone service".</p>				<p>Օանոթագրություն 1. Գերբեռնվածության տոնով առաջարկը նույնն է, ինչ զբաղված է տոնով: Եթե օգտվողները ցանկանում են տարբերակել երկու տոները, երկակի հաճախականության տոն, օրինակ, Կարող է օգտագործվել 425Hz / 1000Hz (0.5s յուրաքանչյուր, կրկնվող):</p> <p>Օանոթագրություն 2. ITU-T Recommendation Q.35 / E.180-ում նշված չէ. «Հեռախոսային ծառայության տոնի տեխնիկական հատկանիշները»:</p>		
<p>3.1.12. Phone Book</p> <p>3.1.12.1. The operator at the operator position shall be able to dial any number which is configured within the system by the selection of a phone book entry.</p> <p>3.1.12.2. Additionally to such a system wide public phone book, it shall be possible to assign important numbers to a personnel phone book.</p> <p>3.1.13. Call Registry</p> <p>3.1.13.1. The operator at the operator position shall be able to see a list of at least the last 20 incoming and outgoing calls.</p> <p>3.1.13.2. The operator shall be able to redial any of the entries within the list.</p> <p>3.1.13.3. For privacy reason, the operator shall be able to erase an entry or the whole list.</p> <p>4. Air-Ground Radio</p> <p>The Air-Ground Radio component of a VCS permits radio telephone conversations to take place between Users connected to the VCS and to mobile units – primarily aircraft but also to ground mobiles too.</p>				<p>3.1.12 Հեռախոսագիրք</p> <p>3.1.12.1. Համակարգի հեռախոսագրքից օպերատորը պետք է կարողանա ընտրել ցանկացած հեռախոսահամար զանգելու համար, որը նախապես գրանցված է համակարգում:</p> <p>3.1.12.2. Ի լրացումն համակարգում ընդգրկված հեռախոսային գրքի, պետք է նաև հնարավոր լինի ավելացնելու համարներ անձնակազմի անձնական հեռախոսագրքում:</p> <p>3.1.13 Կանչի գրանցում</p> <p>3.1.13.1. Օպերատորը աշխատատեղում պետք է կարողանա տեսնել առնվազն վերջին 20 մուտքային և ելքային կանչերի ցանկը:</p> <p>3.1.13.2. Օպերատորը պետք է կարողանա վերահավաքել ցանկի մեջ գտնվող ցանկացած համար:</p> <p>3.1.13.3. Գաղտնիության նպատակով, օպերատորը պետք է կարողանա ջնջել ցանկացած համար կամ ամբողջ ցանկը:</p> <p>4. Երկիր-երկինք ռադիոկապ</p> <p>VCS-ի երկիր-երկինք ռադիոկապը թույլ է տալիս իրականացնել ռադիո խոսակցություններ VCS-ին միացված օգտվողների և շարժական միավորների միջև՝ հիմնականում ինքնաթիռներին, բայց նաև վերգետնյա շարժական միավորներին նույնպես:</p>		

<p>4.1. Facilities</p> <p>4.1.1. Radio Access</p> <p>4.1.1.1. Basic Description</p> <p>Radio access enables a User to transmit and receive voice communications on selected radio frequencies.</p> <p>4.1.1.2. Modes of Operation</p> <p>Radio access at a CWP is activated by the operation of a key associated with a particular frequency. The key shall enable a particular radio frequency to be in one of four modes:</p> <p>a) Off/Deselected;</p> <p>b) Receive only (Rx);</p> <p>c) Transmit and receive (Tx/Rx);</p> <p>d) Cross-coupled.</p> <p>4.1.1.3. Receiving - Frequency Active</p> <p>4.1.1.3.1. When 'Rx' mode has been selected the User shall hear any transmissions that are made on that frequency.</p> <p>4.1.1.3.2. The presence of the carrier frequency shall be indicated at the CWP visually.</p> <p>4.1.1.4. Audio Device Selection – Rx Mode</p> <p>4.1.1.4.1. This facility shall enable the User to select whether transmissions received from aircraft are directed to either a headset or loudspeaker at the CWP.</p> <p>4.1.1.4.2. It shall be possible to simultaneously monitor the same radio channel at more than one operator position.</p> <p>4.1.1.4.3. It shall be possible to simultaneously monitor several radio channels at one operator position.</p> <p>4.1.1.4.4. For safety reasons, the system shall have to ensure that:</p> <p>a) Once the audio device selection for a</p>	<p>4.1. Հնարավորություններ</p> <p>4.1.1. Ռադիո մուտք</p> <p>4.1.1.1. Հիմնական նկարագրություն</p> <p>Ռադիո մուտքը հնարավորություն է տալիս շահագործողին հաղորդելու և ստանալու ձայնային հաղորդագրություններ ընտրված ռադիո հաճախականությունների վրա:</p> <p>4.1.1.2. Աշխատանքի ռեժիմները</p> <p>Ռադիո մուտքը CWP-ի վրա ակտիվացվում է բանալու աշխատանքով, որը կցված է առանձին հաճախականության: Բանալին պետք է հնարավոր դարձնի իրեն կցված ռադիոհաճախականության աշխատանքը հետևյալ չորս ռեժիմներից որևէ մեկում.</p> <p>ա) Անջատված է,</p> <p>բ) Միայն ընդունում է (Rx),</p> <p>գ) Հաղորդում և ընդունում է (Tx/Rx),</p> <p>դ) Խաչաձև զուգորդված է:</p> <p>4.1.1.3. Ընդունում - հաճախականությունը ակտիվ է</p> <p>4.1.1.3.1. Երբ 'Rx' ռեժիմը ընտրված է, շահագործողը պետք է լսի ցանկացած հաղորդումներ, որ արվում են այդ հաճախականության վրա:</p> <p>4.1.1.3.2. Ավիափոխադրողի հաճախականության ներկայությունը պետք է տեսանելի լինի CWP վրա:</p> <p>4.1.1.4. Աուդիո սարքի ընտրություն- ընդունման ռեժիմ</p> <p>4.1.1.4.1. CWP-ում այս հնարավորությունը պետք է շահագործողին թույլ տա ինքնաթիռից ստացված ռադիոհաղորդումները ուղղելու թե՛ ականջակալներին, թե՛ բարձրախոսներին:</p> <p>4.1.1.4.2. Օպերատորների աշխատատեղերում պետք է հնարավոր լինի միևնույն ռադիոկանալի միաժամանակյա մոնիտորինգը:</p> <p>4.1.1.4.3. Մեկ օպերատորի աշխատատեղում պետք է հնարավոր լինի մի քանի ռադիոկանալների միաժամանակյա մոնիտորինգը:</p> <p>4.1.1.4.4. Անվտանգության նպատակներով համակարգը պետք է երաշխավորի.</p> <p>ա) CWP-ում ռադիոկանալի համար աուդիո սարքի ընտրության ավարտը պետք է երևա</p>
---	---

